ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ #24

ՄԱՐՏ 2017

«NEW GENERATION» Humanitarian Non-Governmental Organization

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպություն

«Ժամանակին Համաքայլ» ամսագիրը պարունակում է տվյալ ամսում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված գործունեության համապարփակ նկարագիրը:

ԹԵԺ ԳԻԾ
+374(0)60378989

Մեր ծառայություններն են՝

Իրավական՝
- Իրավաբանական խորհրդատվություն
- Իրավական փաստաթղթերի ձևակերպում
- Քաղաքացիական և քրեական գործերով դատական ներկայացուցչություն
- Ռազմավարական դատավարություն

Առողջապահական՝
- ՄԻԱՎ-ի վերաբերյալ նախաթեստային և հետթեստային անանուն խորհրդատվություն
- Անանուն ՄԻԱՎ-ի թեստավորում և ՍԿ հետազոտություն
- Պահպանակների և լուբրիկանտների տրամադրում

Տեխնիկական աջակցություն՝
- Տարածքի տրամադրում հանդիպումների և միջոցառումների կազմակերպման համար
- Սոցիալական աջակցություն անապահով ընտանիքներին
- Խորհրդատվություն ՔՀԿ-ներին և աջակցություն ենթադրամաշնորհների տեսքով

Բոլոր ծառայությունները անվճար են:

ՌԵՍՈՒՐՍ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՊՐԻԼ ԱՄՍՎԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Անգլերենի ակումբ	Ապրիլ 13 / 20 / 27
Բարեգործական ծրագրի մշակում (հանդիպում-քննարկում)	Ապրիլ 05
Սեռականություն, տրանսգենդերություն, ինտերսեքս (դասընթաց)	Ապրիլ 07 / 12
Մեդիտացիայի օր	Ապրիլ 15
Գույնզգույն խոհանոց՝ պատրաստում ենք ինքներս	Ապրիլ 22
Մարդու իրավունքների ակումբ	Ապրիլ 26

New Generation Humanitarian NGO

ngngo.armenia

@ngngoARMENIA

Հայաստան 0002, ք.Երևան, Թումանյան 41, բն. 4
Apt.4, 41 Tumanyan str. Yerevan 0002, Armenia

+374 60 378989
+374 60 478989

newgenerationngngo@gmail.com
http://ngngo.net/

Անգլերենի Ակումբ

2017 թվականի մարտի 1-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ում տեղի ունեցավ անգլերենի անվճար դասընթացի առաջին պարապմունքը, որը անցկացրեց «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի աշխատակից Նարե Հովհաննիսյանը:

Դասընթացը նախատեսված է անգլերեն սովորել ցանկացող սկսնակների համար: Դասընթացը շարունակելի է, որը կտևի 2 ամիս, ամեն երկուշաբթի և չորեքշաբթի օրերին, ժամը 18:00-ին: ՆՍՀԿ գրասենյակում:
Երկու ամիսների ընթացքում մասնակիցները ձեռք կբերեն անգլերենի բազային գիտելիքներ: Առաջին պարապմունքին ներկա էին 10-ից ավել մասնակիցներ:

«Սեռականություն և տրանսգենդերություն» դասընթաց

2017 թվականի մարտի 3-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի գրասենյակում տեղի ունեցավ «Սեռականություն և տրանսգենդերություն» թեմայով սեմինարը: Սեմինարն անցկացնում էր Էվան:



Քանի որ կազմակերպության կողմից ԼԳԲՏ+ և SUS-ների շրջանակներում անցկացրած կարիքների գնահատման արդյունքում պարզ էր դարձել, որ վերը նշված սեմինարը շատ պահանջված ու արդիական թեմաներից մեկն է, ուստի բոլոր մասնակիցները մեծ ոգևորությամբ ու հետաքրքրությամբ էին մասնակցում սեմինարին:

Սեմինարի ընթացքում Էվան մասնակիցների համար լուսաբանեց, թէ ինչ է սեռականությունը, դրա կոմպոնենտները: Խոսվեց սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության ու գենդերային արտահայտման ձևերի և ինտերսեքսի մասին: Այնուհետև քննարկվեց մտավոր ու ֆիզիկական առողջության և տրանսգենդերության փոխկապակցվածության մասին:

Մասնակիցները լրացրեցին թեստ, որը նախատեսված էր պարզելու համար, թէ ինչքանով էր սեմինարը արդյունավետ և հագեցած նոր տեղեկություններով և գիտելիքներով:

«Ինչպե՞ս արձագանքել ատելության խոսքին օնլայն տիրույթում» թեմայով հանդիպում

2017 թվականի մարտի 4-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի գրասենյակում տեղի ունեցավ «Ինչպե՞ս արձագանքել ատելության խոսքին օնլայն տիրույթում» թեմայով հանդիպումը, որը անցկացնում էր լրագրող Արման Ղարիբյանը:

Մասնակիցները խոսեցին այն մասին, թե ինչ է ատելության խոսքը, վերջինիս դրսևորումները օնլայն տիրույթում, արժե արդյոք արձագանքել ատելության խոսքին ու եթե արժե, ապա՝ ինչպե՞ս:Քննարկվեցին մասնակիցների առաջարկած յուրաքանչյուր տարբերակները, թէ ինչ բովանդակությամբ է ավելի նպատակահարմար արձագանքել ատելության խոսքին:

Այնուհետև մասնակիցներն առաջարկեցին ստեղծվել «Ընդդեմ ատելության խոսքի» նախաձեռնող խումբը, որը պետք է պայքարի յուրաքանչյուր ատելության խոսքի դեմ: Խումբը նախ կորոշի թէ տվյալ գրառման մեջ կա արդյոք ատելության խոսք թէ ոչ, լինելու դեպքում պետք է ընտրել համապատասխան մեթոդներ և կատարել աշխատանքի բաժանում:

Մասնակիցները շատ ոգևորված էին ու ցանկություն հայտնեցին նմանատիպ հանդիպումներ հաճախակի կազմակերպել:

Հանդիպում Տղամարդկանց Առողջության Եվրասիական Կոալիցիայի /ECOM/ ներկայացուցիչների հետ

2017 թ.-ի մարտի 8-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի գրասենյակում տեղի ունեցավ հանդիպում «Տղամարդկանց Առողջության ԵվրասիականԿոալիցիայի» /ECOM/ ծրագրեր ի ղեկավար Ելենա Գերմանի և իրավական հարցերով շահերի պաշտպանության մասնագետ Յուրի Յուրսկիի հետ: Հանդիպման սկզբում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի նախագահ Սերգեյ Գաբրիելյանը ներկայացրեց ՀԿ-ի ստեղծման պատմությունը՝անդրադառնալով ՀԿ-ի առաքելությանը, որդեգրած ուղղություններին և նպատակներին:Ծրագրերի մասին խոսելիս Ս. Գաբրիելյանը մասնավորապես շեշտադրեց այն խոչընդոտները, որոնց ՀԿ-ն առերեսվում է հասարակության կամ տարբեր պետական կառույցների կողմից ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ առկա անհանդուրժողականության մթնոլորտի պատճառով: Այնուհետև ՀԿ-ի ծրագրերի համակարգողներ Նարե Հովհաննիսյանը և Արտյոմ Մովսեսյանը խոսեցին ԼԳԲՏ+ անձանց իրավունքների պաշտպանությանը և SUS անձանց շրջանում ՄԻԱՎ-ի կանխարգելմանն ուղղված ծրագրերի մասին՝ մասնավորապես կարևորելով ԼԳԲՏ+ և SUS անձանց իրավունքների և շահերի պաշտպանության ոլորտում ՀԿ-ի ձեռքբերումները: Իսկ ՀԿ-ի աութրիչ աշխատողները խոսեցին SUS անձանց հետ աշխատանքի առանձնահատկությունների և արդյունքների մասին: Հյուրերը հետաքրքրված էին այն ուսումնասիրություններով, որոնք «Նոր Սերունդ»-ը նախաձեռնել էր՝բարձրաձայնելու համար ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ առկա ատելության խոսքի դրսևորման պատճառների և հիմնական ոլորտների, տրանսգենդեր անձանց սեռափոխության կարիքների և իրավական կարգավորումների խնդիրների մասին: Այնուհետև «Տղամարդկանց Առողջության Եվրասիական Կոալիցիայի» /ECOM/ ծրագրերի ղեկավար Ելենա Գերմանը ներկայացրեց SUS անձանց ՄԻԱՎ-ի կանխարգելմանն ուղղված ծառայությունների Ուկրաինայի փորձը և ECOM-ի ստեղծման պատմությունն ու նպատակները: Հանդիպման ավարտին ECOM-ի իրավական հարցերով շահերի պաշտպանության մասնագետ Յուրի Յուրսկին անցկացրեց սեմինար «Սեռականություն և տրանսգենդերություն» թեմայով՝ հատկապես շեշտը դնելով ինտերսեքս անձանց առնչվող խնդիրներին իրավապաշտպանության ոլորտում:

Տուրիզմ, տուրիզմի հիմունքները թեմայով դասընթաց

2017 թվականի մարտի 10-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի գրասենյակում տեղի ունեցավ 4 հանդիպումից բաղկացած սեմինարի առաջին դասը «Տուրիզմ, տուրիզմի հիմունքները» թեմայով, որն անցկացնում էր «Միացյալ ուղի» Բարեգործական ՀԿ-ի նախագահ, տուրիզմի մասնագետ Սևան Շիրվանին:

Խոսվեց այն մասին, թէ ինչ է տուրիզմը և որն է նրա էությունն ու կառուցվածքը, տրվեց տուրիզմի սահմանումը, քննարկվեցին նրա ձևերը՝ ներքին, ներգնա ու արտագնա, մանրամասն բացատրվեց տուրիզմի տեսակները և թե այդ տեսակներից որոնք են գործում ՀՀ-ում: Սևանը պատմեց նաև տուրգործակալների, տուրօպերատորների և տուրմենեջերների մասին:

Հետո սեմինարի մասնակիցներին տրվեց խմբային աշխատանք, որի ժամանակ բոլորը շատ ոգևորված և ակտիվ էին, քանի որ թեման հետաքրքրաշարժ էր բոլորի համար:

«Առողջության իրավունք» եռամյա ծրագրի մեկնարկը

Ուրախ ենք տեղեկացնել, որ «Նոր Սերունդ» Մարդասիրական և «Իրավունքի Կողմ» հասարակական կազմակերպությունները ի դեմս կազմակերպությունների նախագահներ Սերգեյ Գաբրիելյանի և Լիլիթ Մարտիրոսյանի ստորագրեցին համատեղ համագործակցության հուշագիր «Առողջության իրավունք» եռամյա ծրագիրը համատեղ իրականացնելու նպատակով: Ծրագրի հեռահար նպատակն է՝ նպաստել ՄԻԱՎ-ին առնչվող ծառայություններից օգտվող տղամարդկանց հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդկանց /SUS/ և տրանսգենդեր անձանց թվի աճին:

Ծրագրի խնդիրներն են՝

- Նպաստել տղամարդկանց հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդկանց և տրանսգենդեր անձանց թվի աճին ազգային գործողությունների շրջանակներում որոշումների կայացման գործընթացներում՝ ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների ոլորտում:
- Աջակցել SUS-ների և տրանսգենդեր անձանց հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների կարողությունների զարգացմանը:
- Նպաստել ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների բարենպաստ պայմանների զարգացմանը SUS-ների և տրասնգենդեր անձանց համար խարանի և խտրականության նվազեցման և իրավունքների պաշտպանության գործողությունների միջոցով:
- Ծրագիրը ֆինանսավորվում է Տղամարդկանց Առողջության Եվրասիական Կոալիցիայի կողմից:

ERASMUS+ երիտասարդական փոխանակման ծրագրի մասին դասընթաց

2017 թվականի մարտի 14-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի գրասենյակում տեղի ունեցավ ERASMUS+ երիտասարդական փոխանակման ծրագրի մասին դասընթացը, որն անցկացնում էր Սոֆյա Պիրադյանը:

Դասընթացի սկզբում Ս. Պիրադյանը հարցման միջոցով ճշտեց մասնակիցների տեղեկատվացության մակարդակը վերը նշված ծրագրի մասին, որից հետո ներկայացրեց թե ինչ ծրագիր է ERASMUS+-ը , որն է նրա առաքելությունը և ինչ նպատակներ ունի:

Այնուհետև Ս.Պիրադյանը ներկայացրեց ՀՀ-ում ծրագրի ներկայիս գործող ծրագրերը և տվյալ ծրագրերի ընթացակարգը: Խոսվեց նաև ERASMUS+-ի բյուջեի և ծրագրի թափանցիկության մասին:

Թալինում անցկացվող «Տղամարդկանց Առողջության Եվրասիական Կոալիցիայի» /ECOM/-ի ենթադրամաշնորհառու կազմակերպությունների հանդիպում

«Նոր Սերունդ» Մարդասիրական և «Իրավունքի Կողմ» Իրավապաշտպան ՀԿ-ների նախագահներ Սերգեյ Գաբրիելյանը և Լիլիթ Մարտիրոսյանը 2017 թ.-ի մարտի 14-16-ը մասնակցում են էստոնիայի մայրաքաղաք Թալինում անցկացվող «Տղամարդկանց Առողջության Եվրասիական Կոալիցիայի» /ECOM/-ի ենթադրամաշնորհառու կազմակերպությունների հանդիպմանը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին հետեւյալ հարցերը՝

Կազմակերպությունների կարողությունների զարգացում, Ֆինանսավորման կարգավորման կանոնադրության մշակում, Ռիսկերի և դրանց նվազեցման գնահատում, Առողջության իրավունքի հասանելիությունը և որակը Տրանս* և SUS անձանց շրջանում:

Հանդիպման ընթացքում ներկայացվել է Հայաստանում SUS-ների մոտավոր թիվը և 2016թ-ի հունվարից մինչև 2017թ.-ի փետրվարի դրությամբ «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելման ծրագրի» շրջանակներում ծառայություններից օգտվածների գրանցված քանակը:

Խոսվել է հակախտրականության և սեռափոխության օրենքի բացակայության և այն մասին, որ ՀՀ-ում արգելվում է ԼԳԲՏ+ անձանց կատարել արյան փախներարկում, քանի որ ըստ որոշման ԼԳԲՏ+ անձինք մտնում են այն ռիսկային խմբերի մեջ, ում արգելվում է դառնալ արյան դոնոր:

«ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումը, ՄԻԱՎ-ի թեստավորման կարևորությունը», «Մարդու իրավունքներն ու ՄԻԱՎ-ը», «Մարդու իրավունքների հասկացությունը և պաշտպանության մեխանիզմները» թեմաներով դասընթաց

2017 թվականի մարտի 18-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպությունը «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումը և տեղեկացվածության մակարդակի բարձրացումը SUS-ների շրջանում Շիրակի, Լոռու մարզերում և Երևան քաղաքում» ծրագրի շրջանակներում Երևանում իրականացրեց մեկօրյա սեմինար-վարժանք՝ «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումը, ՄԻԱՎ-ի թեստավորման կարևորությունը», «Մարդու իրավուքներն ու ՄԻԱՎ-ը», «Մարդու իրավունքների հասկացությունը և պաշտպանության մեխանիզմները» թեմաներով:

Սեմինարի նպատակն էր նպաստել ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելմանը երիտասարդների շրջանում՝ բարձրացնելով նրանց իրազեկվածության մակարդակը և բացահայտելով թեստավորման կարևորությունը ՄԻԱՎ-ի վերաբերյալ, ինչպես նաև բարձրացնել հասարակության իրազեկվածության մակարդակը մարդու իրավունքների, ինչպես նաև ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց իրավունքների մասին:

Ընթացքում մասնակիցները ծանոթացան ՄԻԱՎ և ՁԻԱՀ տերմինների, ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի տարբերության, փոխանցման ուղիների և կենսական հեղուկների, պահպանակների ճիշտ օգտագործման, ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցնելու կարևորության մասին, այնուհետև ներկայացվեցին մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, մարդու իրավունքների զարգացման փուլերը, ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերը, ինչպես նաև անդրադարձ կատարվեց «ՄԻԱՎ-ից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքի դրույթներին:

«Անձի իրավական կարգավիճակը իրավապահ մարմիններում» թեմայի շրաջանակներում մասնակիցները ծանոցաթացան իրավապահ մարմինների կատարած խախտումների և տեսական գիտելիքներ ստացան ոստիկանության հետ շփման ու քաղաքացիների իրավունքների խախտումների դեպքերի վերաբերյալ:

Մասնակիցները ստացած տեսական գիտելիքները կարողացան գործնական օրինակների հիման քննարկել խմբային խաղերի ու աշխատանքների, մտքերի փոխանակման և հարց ու պատասխանի միջոցով:

«Տղամարդկանց Առողջության Եվրասիական Կոալիցիայի» /ECOM/-ի առաջին նորընտիր կառավարման խորհրդի առաջին հանդիպումը:

2017թ.-ի փետրվարի 19-21-ը Կիևում տեղի ունեցավ «Տղամարդկանց Առողջության Եվրասիական Կոալիցիայի» /ECOM/-ի առաջին նորընտիր կառավարման խորհրդի առաջին հանդիպումը:

Հանդիպումը նախատեսված էր կառավարման խորհրդի տեսլականի մշակման, ECOM-ի 2017-2021թթ. ռազմավարական պլանավորման ծրագրի քննարկման, ինչպես նաև ECOM-ի և նրա քարտուղարությանը վերաբերող մի շարք կարևոր գործնական փաստաթղթերի ընդունման համար:

Մանրամասները այստեղ

Մարդու իրավունքների, խտրականության և ատելության խոսքի կանխարգելման թեմայով դասընթաց Արտաշատում

2017 թ.-ի մարտի 23-25-ը Արարատի մարզի Արտաշատ քաղաքում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն անցկացրել է «Մարդու իրավունքներ, հանդուրժողականություն և խտրականության արգելք» թեմայով եռօրյա դասընթացը, որի երեք օրերի ընթացքում համապատասխանաբար մասնակիցներին «Մարդու իրավունքներ», «Խտրականության արգելք» և «Խոսքի ազատություն, ատելության խոսք» թեմաները: Դասընթացը վարում էր «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի իրավաբան Հայկ Հայրապետյանը: Դասընթացին մասնակցում էին ներկայացուցիչներ Արարատի մարզպետարանից, Արտաշատի զբաղվածության տարածքային գործակալությունից, ուսուցիչներ հիմնական և միջնակարգ դպրոցներից և երիտասարդներ հասարակական կազմակերպություններից: Մարտի 23-ին «Մարդու իրավունքներ» թեմայի շրջանակում խոսվել է մարդու իրավունքների համընդհանուր հասկացության և պատմության, մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերի, ներպետական օրենսդրության, Եվրոպական Միության և Մարդու իրավունքների Եվրոպայի խորհրդի, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և մարդու իրավունքների եվրոպական դատարանի մասին: Հաջորդ երկու օրերին համապատասխանաբար ներկայացվել են «Խտրականության արգելք» և «Խոսքի ազատություն և ատելությայ խոսք» թեմաները, որոնց ժամանակ մասնակիցները քննարկել են խտրականության սահմանումը, տեսակները և պաշտպանված հիմքերը, այն միջազգային և ներպետական իրավական փաստաթղթերը, որոնք վերաբերում ենք խտրականության արգելքին, մարդու իրավունքների պաշտպանության գործում պետության պոզիտիվ պարտավորությունները, մարդու իրավունքների իրավաչափ սահմանափակումների հիմքերը, վիրավորանքի, զրպարտության և ատելության խոսքի սահմանազատումները: Դասընթացը կազմակերպվել է «Մարդու իրավունքները հանուն բազմազանության և հավասարության» ծրագրի շրջանակներում, որը իրականացվում է Նորվեգիայի Հելսինկյան կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

Օրվա նպատակն է ուշադրություն սևեռել տրանսգենդեր անձանց ձեռքբերումների վրա՝ պայքարելով նրանց դեմ խտրական վերաբերմունքի, ատելության խոսքի, արմատացած սեքսիզմի և տրանսֆոբիայի դեմ:

«Խտրականությունն ընդդեմ Տրանսգենդեր մարդկանց» Տեսանյուը ԱՅՍՏԵՂ